

«Ձեր անձնական բժիշկը» ապահովագրական պրոդուկտի համառոտ տեղեկատվական թերթիկ

«Ձեր անձնական բժիշկը» պրոդուկտը նախատեսում է ՌԴ առաջատար բուժկենտրոնների բժիշկների կողմից առողջական խնդիրներին վերաբերող հարցերի շուրջ կատարվող առցանց բժշկական խորհրդատվությունների (հեռահար բժշկական խորհրդատվություն) տրամադրում և իր մեջ ներառում է՝

- **Շուրջօրյա առցանց բժշկական** խորհրդատվություն բժիշկ-թերապևտի/բժիշկ- մանկաբույժի հետ,
- **Առցանց բժշկական խորհրդատվություն** - մասնագետի/ նեղ մասնագիտացված բժշկի հետ,
- **«Երկրորդ կարծիք»** - առցանց բժշկական կրկնակի խորհրդատվություն մասնագիտացված բժիշկների կողմից ավելի վաղ տրված ախտորոշման վերաբերյալ (ընդ որում Ձեր «Անձնական գրասենյակ» կարող եք ներբեռնել բժշկական փաստաթղթերի կրկնօրինակները),
- **«Անձնական գրասենյակ»** - այստեղ պահպանվում են Ապահովագրվածի, այսինքն՝ Ձեր կողմից ներկայացված դիմումների պատմությունը և առցանց խորհրդատվությունների արդյունքում բժիշկների կողմից տրված գրավոր ցուցումները, ինչպես նաև կարող են ներբեռնվել բժշկական այլ փաստաթղթեր:

Դիմումների քանակն անսահմանափակ է: **Ապահովագրական գումար՝ 12,000 Եվրո**

Բացառություններ

Հեռահար բժշկական խորհրդատվությունները տրամադրվում են անմիջականորեն Ապահովագրվածի առողջության հետ կապված բժշկական բոլոր խնդիրների վերաբերյալ, բացառությամբ՝

- ✓ հարցերի, որոնց գծով բժիշկը չի կարող կազմել իր մասնագիտական կարծիքը՝ բուժզննում և այլ մանիպուլյացիաներ հեռակա մեթոդով անցկացնելու տեխնիկական անհնարինության պատճառով
- ✓ հարցերի, որոնց համար անհրաժեշտ է ստանալ հավելյալ տեղեկատվություն (բուժզննման արդյունքներ, անալիզներ և այլն)

Ինչպես է աշխատում ծրագիրը

Հեռահար առցանց խորհրդատվությունները անցկացվում են [«am.onlinedoctor.ru»](http://am.onlinedoctor.ru) ծառայության օգնությամբ հետևյալ ձևաչափով՝

- Տեսակապ
- Ձայնակապ
- Հաղորդագրություններ
- Հեռախոսագրույց

Առցանց խորհրդատվություն ստանալու համար Ապահովագրվածը պետք է գրանցվի [«am.onlinedoctor.ru»](http://am.onlinedoctor.ru) կայքում ներքոնշյալ ընթացակարգով՝

1. **Գրանցում** - Ապահովագրվածը գրանցվում է [«am.onlinedoctor.ru»](http://am.onlinedoctor.ru) կայքի «Անձնական գրասենյակում»

Այդ նպատակով Ապահովագրվածը մտնում է am.onlinedoctor.ru հղումով կայքը, սեղմում է «Գրանցվել» կոճակը և մուտքագրում է գրանցման համար անհրաժեշտ տվյալները: Դաշտերը լրացնելուց հետո հեռախոսահամարին, որը կնշվի Ապահովագրվածի «Անձնական գրասենյակում» գրանցվելու ժամանակ, կուղարկվի կարճ հաղորդագրություն, որում կնշվի «Անձնական գրասենյակ» մուտք գործելու գաղտնաբառը:

2. **Դիմում - խորհրդատվության դիմում-հայտի ստեղծում**

- «Անձնական գրասենյակում»՝ am.onlinedoctor.ru կայքում
- հեռախոսային հավելվածի միջոցով
- **+37460690061** հեռախոսահամարով՝ զանգահարելով Ապահովագրված անձի այն հեռախոսահամարից, որը նշվել է գրանցման ժամանակ:

3. **Խորհրդատվություն** - խորհրդատվություն բժիշկ-թերապևտի /բժիշկ- մանկաբույժի կամ մասնագիտացված բժշկի հետ հաղորդագրությունների, տեսակապի, ձայնակապի միջոցով: Դուք հնարավորություն ունեք խորհրդատվություն անցնել հայախոս բժշկի մոտ:

4. **Եզրակացություն** - զրույցի արդյունքների ամփոփում, խորհրդատվական եզրակացության պահպանում անձնական գրասենյակում:

5. **Բոլոր այն հարցերով, որոնք կապված են՝**

- am.onlinedoctor.ru կայքում գրանցման հետ.
- Բժշկական օգնություն ստանալու կարգի հետ:

Ապահովագրածը կարող է ստանալ խորհրդատվություն բուժ.վահանակի սպասարկման կենտրոնի շուրջօրյա գործող **+37460465966 հեռախոսահամարով:**

Շտապ բժշկական խորհրդատվություն և/կամ Շտապ բժշկական օգնություն ստանալու համար անհրաժեշտ քայլեր

1. Ապահովագրվածը «Անձնական գրասենյակ» -ի կամ գրանցման ժամանակ նշված հեռախոսահամարի միջոցով ուղարկում է շտապ խորհրդատվության հարցում:
2. Հերթապահ բժիշկը **3 րոպեի** ընթացքում կապնվում է Ապահովագրվածի հետ և խորհրդատվությունը սկսվում է:
3. Խորհրդատվության արդյունքում բժիշկը հաճախորդի «Անձնական գրասենյակ» է ուղարկում գրավոր եզրակացություն, որը պարունակում է Ապահովագրվածին տրված բոլոր ցուցումների ցանկը:
4. Անհրաժեշտության դեպքում բժիշկը Ապահովագրվածին գրանցում է նեղ մասնագիտացված բժշկի մոտ պլանային առցանց խորհրդատվության համար:

Պլանային բժշկական խորհրդատվություն ստանալու համար անհրաժեշտ քայլեր

1. Ապահովագրվածը «Անձնական գրասենյակ»-ի կամ կամ գրանցման ժամանակ նշված հեռախոսահամարի միջոցով ձևավորում է պլանային խորհրդատվության հարցում. ընտրում է բժշկին, նշում հարմար ժամը և անհրաժեշտության դեպքում ներբեռնում է փաստաթղթեր (բուժզննումների, հետազոտությունների արդյունքներ և այլն):
2. Նշանակված ժամին բժիշկի և Ապահովագրվածի միջև կապ է հաստատվում և խորհրդատվությունը սկսվում է:
3. Խորհրդատվության արդյունքում բժիշկը հաճախորդի «Անձնական գրասենյակ» է ուղարկում գրավոր եզրակացություն, որը պարունակում է Ապահովագրվածին տրված բոլոր ցուցումների ցանկը:

Ապահովագրության պայմանագրի գործողությունը կարգավորող պայմաններին ավելի մանրամասն ծանոթանալու համար կարող եք այցելել www.rgs.am կայքը:

**Ռոսգոսստրախ- Արմենիա ԱՓԲԸ,
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0001, Հյուսիսային պողոտա 1
Հեռ. +374 10 59 10 10, 50 07 70, www.rgs.am**